ԱՐԱՋԻՆ ԳԼՈՒԿԸ՝ ,,Հայկական բանակը 1918-1920 թթ.,,, բաղկացած է չորս բաժիններից: Առաջին բաժնում ցույց է տրված, թե ինչպես 1918թ. մայիսի 28-ին Հայաստանի պետականության վերականգնումից հետո կազմավորվեց Հայաստանի Հանրապետությունը բանակը: Բանակի կազմավորման աշխատանքները գլխավորում էր գինեգրական նախարարությունը՝ գեներալ-մայոր Հովհաննես Հախվերդյանի գլխավորությամբ: Չնայած թուրքիայի հետ 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում կնքած հարկադրական և ստորագույցիչ պայմանագրի համաձայն Հայաստանի Հանրապետության գինեգրական կազմավորման գործը լուրջ դժվարությունների և սահմանափակումների հետ էր կապված /գլխավոր է ստեղծվել միայն մեկ դիվիզիա/, գինեգրական նախարարությունը ձեռնամուխ եղավ հայկական բանակի ստեղծման աշխատանքներին: Այդ նպատակով Բիճլիսում ստեղծվեց հայկական զորամասերի, ստորաբաժանումների և գինեգրական կազմերի Հայաստան ուղարկելու ժամանակավոր շտաբ՝ գեներալ-մայոր Իվան Բաղրամյանի գլխավորությամբ: Շտաբը հիմնականում ղեկավարում էր Հայկական կորպուսի նախկին զորամասերի Հայաստան ուղարկելու նախարարատան աշխատանքները: Հայկական կորպուսի զորամասերն էլ հանդիսանում էին 1-ՀՀ-ԴԴԴ, 5-204, 9-1, 9-10, 9-12:

Էին նորաստեղծ բանակի կորպոր: Հայկական կորպուսը կազմավորվել էր դեռևս 1917 թ. նոյեմբերին և Կովկասյան ռազմաճակատից ուղևորված զորքերի հեռանալուց հետո փոխարինել էր նրանց՝ թուրքական զորքերի առաջնահրահույժն արգելակելու նպատակով: Հայկական կորպուսի հրամանատարը ուղևորված բանակի հմուտ և փորձված զորավար գեներալ-լեյտենանտ Թովմաս Նազարբեկյանն էր: Կորպուսի զորամասերը 1917 թ. նոյեմբեր - 1918 թ. մայիս ամիսներին անհավասար, ծանր, բայց հերոսական մարտեր էին մղել թուրքական թվագին մի քանի անգամ գերազանցող և լավ զինված զորքերի դեմ, վճռական դեր խաղացել 1918 թ. մայիսի 22-29-ր անդի ունեցած Սարգաթապատի, Բաշ-Ապրանի և Դարբախիսայի ճակատամարտերում սարած հաղթանակներում, որոնք բախորդոշ նշանակություն ունեցան ինչպես հայ ժողովրդի ֆիզիկական քնաշնչումից փրկելու, այնպես էլ նրա պետականության վերականգնման գործում: Կորպուսի վերականգնավորման հիմնական աշխատանքները սկսվեցին գեներալ Նազարբեկյանի 1918 թ. հունիսի 26-ի Թիվ 99 հրամանով, որի համաձայն Առանձին հայկական կորպուսը վերականգնավորվում է Առանձին հայկական դիվիզիայի, որի հրամանատար է նշանակվում ռուսական բանակի փորձված զորավար գեներալ-մայոր Մովսես Միլիկովը, որը մինչ այդ եղել էր հայկական կորպուսի 2-րդ հրաձգային դիվիզիայի հրամանատար, հատկապես աչքի ընկել Սարգաթապատի ճակատամարտում: Առանձին հայկական դիվիզիան սկզբնական 2 շաբաթում բաղկացած էր երկու հետևակային, մեկ հրետանային բրիգադներից, հեծյալ հավաքական զնդից, օժանդակ ալլ զորամասերից ու ստորաբաժանումներից: Հետևակային բրիգադները բաղկացած էին երեքական հետևակային զնդերից, որոնցից յուրաքանչյուրում կային երեքական զուգարակներ: Առաջին հետևակային բրիգադայի հրամանատար է նշանակվում գնդապետ Դանիել-Յեկ Թիրումովը, երկրորդի՝ գնդապետ Բաղդասարովը, հրետանային բրիգադային՝ փոխգնդապետ Խաչատուր Արարատովը, հեծյալ գնդին՝ գնդապետ Նիկոլայ Մոզանովը: Հետևակային զնդերի հրամանատարներ են նշանակվում՝ գնդապետներ Դուրուխանովը, Սամույլենկոն, Կազիմիրսկին, Տիմչենկոն և Գովել Թիրումովը, հրետանային դիվիզիոնների հրամանատարներ՝ կապիտաններ Իվան Վերիլովը, Բազրաա Առուշանյանը, Վլադիմիր Մակիլային, Նիկոլայ Սլիշը /վերջին չորսը հետագայում դարձան խորհրդային բանակի գեներալ-լեյտենանտներ/ և ուրիշներ: Նրանք բոլորն էլ ուսուցանում էին բանակի փորձված սպաներ էին, ունեին գինեգրական մասնագիտություն փայլուն կրթություն, պատերազմական հաջուխ փորձ, իրենց քաջությանը աչքի էին ընկել մարտերում, հատկապես՝ Սարգաթապատի ճակատամարտում և մեծ հեղինակություն էին վայելում ինչպես գինեգրական, այնպես

1 Սույն տեղում, գ. 47, թ. 2:

2 Նախարարության կողմից, 17 սեպտեմբերի 1918, էջ 5-5: ՀՀ ԳԳԱ, Գ. 204, Գ. 1, Գ. 42, Գ. 27:

էլ ժողովրդական լայն խավերի շրջաններում: Մինչև աշուն ավարտվեցին նաև գինավորական նախարարության գերատեսչությունների և կենտրոնական ավարտի ձևավորման աշխատանքները: Նախարարության համալսարանում ստեղծվեցին՝ հրետանային, համաքաղաքային, սանիտարական, անասնաբուժական, ուսումնասիրական վարչություններ, որոնք համապատասխանաբար դիվիզիոնում էին՝ գեներալներ կոնստանդին Գամազով, Ջուլիանով, գնդապետներ՝ Շուլսկի, Պալկևսկի, Բենիամին Կարգանյանց և Մակար Գուլով: Ռազմական կարգապահության հարցերը ընտրվելու և վճռելու նպատակով ստեղծվեց ռազմական խորհուրդ, որի նախագահ նշանակվեց գեներալ Նազարբեկով: Նա միաժամանակ հանդիսանում էր Հայաստանի Հանրապետության գործերի հրամանատարը: ¹ Ռազմական խորհրդի անդամներ նշանակվեցին գինավորական բարձր սլոններ վարող հրամանատարներ և նախարարության վարչության ակտեր: Ռազմական խորհրդի նախագահը, դիվիզիայի հրամանատարը և բոլոր վարչությունների ակտերը ենթարկվում էին գինավորական նախարարին: Վերջինս առընթեր, որպես վարչական մարմին, ստեղծվեց գինավորական շտաբ /գլխավոր շտաբ/, որը բաղկացած էր շարային և գործառնական բաժիններից: ² Սկզբում շտաբի ակտ է նշանակվում գնդապետ Ալեքսանդր Շնիտկո, ապա գնդապետ Բոգդան Բաղդասարով:

1919 թ. սկզբներին Առանձին հայկական դիվիզիան ենթարկվեց վերակազմավորման, որի հետևանքով զգալի չափով ամփոփվեց ինչպես հայկական գինավորական ուժերի թվաքանակը, այնպես էլ գործողների թիվը: մեկ դիվիզիայի փոխարեն ստեղծվեց երեք հետևակային, մեկական հրետանային և հեծյալ բրիգադներից, մասնագիտացված գործառնական ու ստորաբաժանումներից բաղկացած բանակ: ³

1920 թ. օգոստոսի 1-ի դրությամբ Հայաստանի հանրապետության բանակը բաղկացած էր մշտական և կամավորական զորքերից: Մշտական՝ կանոնավոր զորքերի մեջ էին մտնում վերոհիշյալ առանձին հետևակային բրիգադները, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած էր երեքական հետևակային գնդերից, հեծյալ բրիգադան, որը բաղկացած էր երկու հեծյալ գնդերից, հրետանային բրիգադան, որի մեջ մտնում էին չորս հրետանային դիվիզիոններ՝ յուրաքանչյուրում երկուական ընդհանուր և լեռնային, մեկական հատրիցային մարտկոցներ, ,,Ազատամարտ,, ,,Սասուն,, և ,,Արդան Զորավար,, զբաղակցություններ: Մշտական զորքերի մեջ էին մտնում նաև անկանխական զորամասերը: Ինքնաներկայան /մարտադրական/ զուգորակող, ռազմաօդային դիվիզիոնը, Երևանի հզոր ռազմական, ավիացիոն շոկատ, Սեանի լեռային

1 ՀՀ ԳԳՄԼ, Թ.199, Գ.1, Գ.35, Թ.263:

2 Նույն տեղում, Թ.45, Գ.1, Գ.32, Թ. 1-2:

3 1920 թ. նոյեմբերին հետևակային բրիգադների թիվը հասավ վեցի:

նախադրվող և այլն: Մշտական զորքերի մեջ էին մտնում նաև ռեզերվոս և սահմանազան զորամասերը /Արցախի ռեզերվոս հրետանի, Ղարաբաղի 1-ին և Արցախի 2-րդ սահմանազան բրիգադներ/, ուղեկցող և զբաղակցություններով էին նաև ռազմական շոկատները՝ միլիցիական-կամավորական պարտիզանական զորքեր /Կարաբաղյան, Գողթանի, Էջմիածնի, Դրեքուրյանի առանձին գումարակներ, Իզդիբի, Արցախ, Ալեքսանդրապոլի և Ղուշչի առանձին հեծյալ դիվիզիոններ և հարյուրյակներ/: Հայկական ողջ գինավորական ուժերը բաժանված էին յոթ հիմնական զորամասերի ու շոկատների: Ալեքսանդրապոլի և Արևելյան գործակալ, Կարաբաղյան, Նոր-Բալաղեղի, Շորուրի, Գլխի շոկատներ, հատուկ երազներից շոկատ: 1920 թ. օգոստոսի 26-ի ինքնաներկայան գումարակող վերակազմավորվում է մարտադրական գնդի, որի մեջ մտնում էին երեք նախարար, երկու հետազոտիչ և մեկ երկրաբանական մեջակ:

Հայկական բանակի իր առաջին կարիքները հոգալու համար ունեցի մի շարք գինավորականներ և արտադրամասեր: գինավորական ու հրետանային վերանորոգման արհեստանոց և փամփուշտի պատրաստման արտադրամաս Բալաղեղում, գումակամեխանիկային, կոշիկի, համազգեստավորման արհեստանոցներ, զարդանոց և ծիսականներ Ալեքսանդրապոլում, շուկակապող Արցախում և այլն:

Վերավոր և հիմնական ռազմիկների, պարսիկ ու ասիականների խմբերը առավելում էր Երևանի և Ալեքսանդրապոլի գինավորական հոսպիտալներում, Արցախ, Արցախի, Իզդիբի, Կարաբաղի, Գլխի շոկատ, Զալալով /Սահմանազան/ գինավորական հիմնականներում: Բացի այդ պարսիկների համար ստորաբաժանային հաստատություն կար Բալաղեղում, իսկ վերավորների տեղափոխման գործը կազմակերպվում էր հատուկ սանիտարական գնացքի միջոցով: 1918 թ. սեպտեմբերի 1-ի դրությամբ Հայկական բանակում ծառայում էին 48 ռազմային թմիշներ, ¹ որոնց թվում դիվիզիայի գլխավոր թմիշ Եր-բախյանը, Երևանի և Ալեքսանդրապոլի գինավորական հոսպիտալների գլխավոր թմիշներ Արցախյան Սամաղեղան, Շուրեի Պալկևսկի, Արցախյան Լազարյանի թմիշ Բրիտանից Թիքումով և ուրիշներ: ²

1918 թ. սեպտեմբերի 18-ի դրությամբ հայկական զորքերը հիմնականում գինավոր էին ուսուցված երեք գնդի, ,,Մոսկո,, ,,Բերգանյան,, և ,,Լեռն,, տեղի հաջորդներով, ,,Մուլգան,, և ,,Նազան,, տեղի արտադրականներով, ,,Կարաբաղ,, ,,Արցախ,, ,,Լուրիս,, և ,,Վիկտոր,, տեղի գնդա-

1 ՀՀ ԳԳՄԼ, Թ.280, Գ.1, Գ.9, Թ.1-3:

2 ՀՀ ԳԳՄԼ, Թ.199, Գ.1, Գ.142, Թ. 184-190:

3 Նույն տեղում, Թ.204, Գ.1, Գ.10, Թ.47:

4 ՀՀ ԳԳՄԼ, Թ.280, Գ.1, Գ.9, Թ.1-3:

ցիրենքով, 3 դուլմանոց ամառային և լեռնային հրամաններով, 8 դուլմանոց հառաքիցներով, հեծելազորային կամ հրետազորային թրերով, զաշույններով ու սկիներով: ¹ Փոխադրամիջոցներից էին՝ երկծի սալեր, ծիակաքեր, երկծի բռնասալեր, սանիտարական երկանիվ սալակներ, հատուկ նախատեսված քանակներ:

Երկրորդ բաժնում լուսաբանված են Հայկական բանակի թվաքանակի, սպանազինության և համալրման հոգիները: Վերլուծելով արիմային ժամերը և ռնդհանրացնելով դրանք գույց է տրված, որ 1918 թ. աշնանը Հայկական բանակի շարքերում ծառայում էին շուրջ 16000, 1919 թ. հուլիսի վերջերին՝ 18000, իսկ 1920 թ. նոյեմբերի սկզբներին՝ 40000 մարդ: Հայկական բանակը համալրվում է Հայաստանի խորհրդարանի կամ նախարարների խորհրդի կողմից ռնդունած օրենքների հիման վրա /խոսքը վերաբերում է մշտական կանոնավոր գործին/: Ըստ 1919 թ. հուլիսի 1-ի գորակոչի մասին օրենքի, Հայկական բանակում զինվորական ծառայության ընդհանուր ժամկետը որոշվում էր 18 տարի, որից 3-ը՝ իսկական զինվորական ծառայության, իսկ 15-ը՝ պահեստային: Բանակ էին գորակոչվում 18 տարին լրացած, զինվորական ծառայության համար սիրանի գորակոչիկները: ² Բանակ էին գորակոչվում միայն բրիտանյանները: Հայաստանում աղքատ ոչ մուսուլման ուղղափառ փոքրամասնության ներկայացուցիչները, չնայած օրենքով նույնպես չէին գորակոչվում կանոնավոր զինվորական ծառայության, այնուամենայնիվ, նրանք Հայկական բանակում ունեին իրենց ազգային ստորաբաժնումները /եզդիներից ըստ կացած գումարտակ և հետևակային հարյուրյակ, ասորական գումարտակ/: ³

Հայկական բանակի սպանազինումը և հանդերձությունը սկզբնական շրջանում կառավարվում էր հիմնականում ռուսական բանակի Հայաստանի առաքյալ թողած սպանազինության և հանդերձների հաշվին, սպա՝ Անգլիայից և ԱՄՆ-ից ստացվող ռազմապաշարի, հանդերձների և պարենամթերքի հաշվին: Բանակի համալրման գործը կառավարվում էր նաև ՀՀ զինվորական նախարարության համադրական վարչության միջոցով: Բանակի նյութական օգնությունը գույց տալով գործին սկզբի վրա մասնակցեցին նաև անյուրթահայերը, որոնք ոչ միայն զգալի չափով թեթևացրեց համաքաղաքային վարչության հոգսերը, այլև մեծ չափով նպաստեց հայրենիքի և աշխարհով մեկ սիրված հայերի միասնությանը:

Երրորդ բաժնում լուսաբանված են բանակի կառավարման, աստիճանադիման, անձնակազմի վարձարման և ուսուցման հոգիները: Համայնաշխարհ է, որ Հայկական բանակը կազմակերպված էր ռուսական բանակի համակարգով և կառավարվում էր ռուսական զինվորական կանաններով: Գեներալական և սպայական

1 Նույն տեղում, Գ.204, Գ.1, Գ.42, Թ.81:

2 ՀՀ ԳԳՆ, Գ.199, Գ.1, Գ.41, Թ.34-35:

3 Նույն տեղում, Գ.35, Թ.107-108; Գ.142, Թ.184-190; Գ.200, Գ.1, Գ.568, Թ.15:

կազմը իր կրթությունը ստացել էր ռուսական զինվորական ուսումնարաններում և ակադեմիաներում, ուներ հարուստ մարտական փորձ. նրանց զգալի մասը մասնակցել էր Առաջին համաշխարհային, իսկ որոշ մասը նաև ռուս-թուրքական պատերազմներին: Զինվորական աստիճանաբանական համակարգում պահպանված էր ռուսական բանակում զոյություն ունեցած աստիճաններն ու կարգը: Զինվորները, ենթասպաները, սպաներն ու գեներալները կրում էին նույն ուսադիրներն ու տարբերանշանները, ինչ ընդունված էր ռուսական բանակում: Զինվորական աստիճանները նույնպես նույնն էին. վառատար (прапорщик), փոխտեղակալ (подпоручик), տեղակալ (поручик), փոխգլխավոր (штабс-капитан), գլխավոր (капитан), փոխգնդապետ (подполковник), գնդապետ (полковник), կրտսեր գործադր (генерал-майор), ավագ գործադր (генерал-лейтенант), հետևազորի գեներալ (генерал от инфантерии) ¹:

Ծառայության կազմի կոչումները նույնպես նույնն էին. շարքային, ենթաշարքային, կրտսեր ենթաշարքային, ավագ ենթաշարքային և Ֆելդֆելե: ² Հարկ է նշել, որ աստիճանաբանական ժամանակ խստորեն պահպանվում էր զինվորական կոչումների հերթականությունը և հաջորդականության կարգը՝ հաշվի առնելով կոչումը ստացողի նախկին աստիճանը, պաշտոնը, ծառայության ժամկետը, հրամանատարական ունակությունները և այլն: ³ Աստիճանաբանական իրավունքը վերապահված էր Հայաստանի Հանրապետության կառավարությանը՝ զինվորական նախարարի առաջարկով: ⁴ Հայկական բանակի գեներալները, սպաները, ենթասպաներն ու զինվորները իրավունք ունեին կրելու նախկինում քաջության և անբասիր ծառայության համար ստացած իրենց բոլոր շքանշաններն ու մեդալները: Հայաստանի Հանրապետության կառավարությունը ստեղծեց նաև իր սեփական հայկական շքանշանները. 1919-1920 թթ. ստեղծվեց ,,Հայրենիքի արած ծառայությունների համար,, և ,,Վարդան Զորավար,, շքանշանները, սակայն տեսնական պատճառներով չհասցրեց դրանց պատրաստումը և դրանց փոխարեն թույլատրված էր տալ հատուկ մետաղե կրծքանշաններ՝ պետական զինանշանի պատկերով: ⁵ Հայաստանի Հանրապետության զինվորական նախարարին իրավունք էր տրված նաև հայկական բանակի զինվորներին, ենթասպաններին ու սպաներին պարգևատրել ռուսական Գեորգիական խաչ շքանշանով և մեդալներով: ⁶ Հետաքրքիր է նշել,

1 ՀՀ ԳԳՆ, Գ.200, Գ.1, Գ.618, Թ.217; Գ.199, Գ.1, Գ.190, Թ.167:

2 Նույն տեղում, Գ.200, Գ.1, Գ.442 /1-ին մաս/, Թ.205:

3 Նույն տեղում:

4 Հայաստանի խորհրդարանի հրատարակած օրենքներ 1918-1919թթ., մաս 1-ին, Ե., 1919, էջ 57:

5 ՀՀ ԳԳՆ, Գ.199, Գ.1, Գ.154, Թ. 137-139; Գ.200, Գ.1, Գ.442 /2-րդ մաս/, Թ.557:

6 Նույն տեղում, Գ.208, Գ.1, Գ.42, Թ.151:

որ Հայկական բանակի յուրաքանչյուր զուեղ ուներ իր զնդային զինվորական քահանան: Այս բաժնում լուսաբանված են նաև անձնակազմի վարձատրման, հայկական զինվորական դպրոցների բացման, բանակի ազգայնացման, ինչպես նաև , , Բազմիկ, , Թերթի հրատարակման հետ կապված հարցերը:

Զորորոգը բաժնում վեր է հանվել Հայաստանի Հանրապետության պաշտպանության գործում Հայկական բանակի դերը, լուսաբանվել բանակի վերակազմավորման հիմնահարցը: Մասնավորապես ընդգծված է այն միտքը, որ Հայաստանի Հանրապետության գոյություն ունեցավ համեմատաբար կարճ ժամանակաշրջանում՝ 1918 թ. մայիսի 28-ից մինչև 1920 թ. դեկտեմբերի 2-ը, այն էլ երկրի շրջափակման ու միջազգային քաղաքական անբարենպաստ պայմաններում, նրա հրամանատարությունը կարողացավ ոչ միայն համապատասխան մակարդակի վրա պահել անձնակազմի մարտական ուսուցման և պատրաստակաությունը աշխատանքները, այլև թշնամու նկատմամբ մի շարք մարտերում տանել հաղթանակներ, հանրապետության վերադարձնել հակառակորդի կողմից զավթված մի շարք տարածքներ: Թուրքական, վրացական, ադրբեջանական ծակտնեքում հայկական զորքերի տարած հաղթանակների կազմակերպման գործում իրենց արժանի ավանդն էին ներդրել՝ հետևագործի գեներալ Թովմաս Նազարբեկովը /այս բարձր կոչումը նրան շնորհվել էր 1919 թ. մայիսի 28-ին/, գեներալ-լեյտենանտ Մովսես Սիլիկովը, Հովհաննես Հախվերդովը, 1919 թ. մարտի 27-ին վերջինիս զինվորական նախարարի պաշտոնում փոխարինած գեներալ-մայոր խաչատուր Արարատովը,¹ ըրիզադաների հրամանատարներ, գեներալ-մայորներ՝ Արտեմ Հովսեփյանցը, Դանիել-Բեկ Փիրումովը, Բաղդասարովը, խանկալամովը, Շելկովիկովը, բանակում զանազան պատասխանատու պաշտոններ վարած գեներալներ՝ իվան Բաղրամովը, Չուբարովը, Կոնստանդին Գամազովը, Դուրյանովը, խաչատուրովը, իվան Լազարովը, Քիշմիշևը, Նիկոլայ Կորզանովը, Ալեքսանդր Բեյ-Մամիկոնյանը, Շահրուհադովը, Պավել Մեկիք-Շահնազարովը, Բուբեն Պոզոնը, Ալեքսանդր Գալինը, Վասիլի Խորամանակին, Դիմիտրի Անդրեևսկին, Վլադիմիր իվանովը, Ֆիսենկոն, Մակար Պոպովը: Հսկայական էին Լոռվա ծակտնեքում, Նախիջևանում և Ջանգեզուրում հայկական զորքերի տարած հաղթանակներում գեներալ-մայոր Անդրանիկ Օզանյանի, զնդապետ Գարեգին Տեր-Հարությունյանի /Նժդեհ/, Դրաստամատ Յանալյանի /Դրո/ կատարած դերը: Հայկական բանակի բանիմաց, փորձառու և խիզախ սպաներից էին զնդապետներ՝ Անդրեյ Մեկիք-Շահնազարովը, Ալեքսանդր Նյուրեդյանը /հենվել զնդերի հրամանատարներ/, Ալեքսանդր Միրիմանյանը, Նիկոլայ Խուդաբաշյանը /հետևակա-

¹ 1920 թ. ապրիլի 3-ին զինվորական նախարար է նշանակվում Բուրեն Տեր-Միսայանը, որին 1920 թ. նոյեմբերի 23-ին փոխարինում է Դրաստամատ Յանալյանը՝ Դրոն:

յին զնդերի հրամանատարներ/, Բոգդան Բաղդասարյանը /զխավոր շտաբի պետ/, Ալեքսանդր Վլադիմիրովը /Ալեքսանդրապոլի զավառային զինվորական կոմիսարիատի պետ/,¹ փոխզնդապետ Լևոն Գեղամովը /Մարտաբազմական վաշտի հրամանատար/, շտաբ-կապիտան Հայկ Գյանջուցեկ /հայկական բանակի ավտոգրամատի հրամանատար/, պորուչիկ Գրիգոր Շահմուքադովը /ուղիոյի ծրագրային մասի պետ/, զրահազնացների հրամանատարներ, կապիտաններ՝ Միրունյանցը, Մուսաբեկյանը, Մուլթան-Շահը, հրետանային մարտիցների հրամանատարներ, կապիտաններ՝ Գևորգ Չալախյանը, Հմայակ Հախնազարյանը, իվան Վեքիլովը, Բազրատ Առուշանյանը, Վլադիմիր Սակիլարին, Նիկոլայ Նիկիտ /վերջին վեցը հետագայում դարձան Խորհրդային բանակի գեներալներ/, հենվել դասակի հրամանատար, պորուչիկ Հովհաննես Բաղրամյանը /հետագայում Խորհրդային Միության մարշալ, կրկնակի հերոս/, Երևանի կապգործի պարետ, կապիտան Արշավիր Շախնուհին /հետագայում անվանի դերասան, կինոյում կերտել է Անդրանիկի կերպարը/ և շատ ուրիշներ:² Առաջին զվի չորրորդ բաժնի վերջում վեր են լուծվել 1920 թ. աշնանը Հայաստանում տեղի ունեցած իրադարձությունները, մասնավորապես հայ-թուրքական, հայ-ադրբեջանական և հայ-վրացական հարաբերությունները: Սեպտեմբերի 22-ին քեմալական թուրքիան հարձակվում է Հայաստանի Հանրապետության վրա՝ նպատակ ունենալով զավթել Արևելյան Հայաստանը, Ֆիզիկապես ոչնչացնել նրա հայ բնակչությանը և վերջնականապես ազատվել հայկական հարցից: Քաղաքներ փաշայի 60 հազարանոց զորքը, որին զգալի օժանդակություն էր ցույց տալիս նաև թուրքական սպաների կողմից մերձծակատային շրջաններում բնակվող մահմեդականներից կազմավորված զորամասերը, շնորհիվ Թվական գերակշռության /հայ-թուրքական ծակտնեքում հայերն ունեին 20 հազարից փոքր ինչ ավելի զորք/ և հարձակման, հանկարծակիության, կարողացավ կարճ ժամանակամիջոցում հասնել մեծ հաջողությունների: Սեպտեմբերի 29-ին թուրքերը զբաղեցին Սարիղամիշն ու Մաղզալանը, հոկտեմբերի 30-ին, չորսօրյա համառ մարտերից հետո, Նարսը /որը անգլիացիների կողմից կողոպտվելուց հետո մնացել էր առանց քերդապահ ծանր հրետանու, իսկ եղածներն էլ հիմնականում հին ու շարքից դուրս եկած հրանոթներ էին՝ առանց անձնակազմների/, նոյեմբերի 5-ին՝ Ալեքսանդրապոլը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը օգնության խնդրանքով դիմում է իր այսպես կոչված դաշնակից մեծ տերություններին՝ Անգլիային, ԱՄՆ-ին, Ֆրանսիային և Իտալիային կառավարություններին, ինչպես նաև Ազգերի լիգային

¹ Գնդապետ Ալ. Վլադիմիրովի մայրը և կինը հայուհիներ էին: Նրա որդին՝ Բորիս Վլադիմիրովը հետագայում՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին դարձավ Խորհրդային Միության հերոս, գեներալ-լեյտենանտ, զինվորային հրամանատար:

² Մեր հաշվումներով 1918-1920 թթ. Հայկական բանակում ծառայում էին 27 գեներալ, շուրջ 2500 սպաներ:

Մակայն հայ ժողովրդի համար այդ օրհասական պահին մեծ տերություններից և ոչ մեկը օգնություն չպարզեց նրան: Թուրքական ռազմածակատու հայերի կրած անհաղորդություններից ամիշապես օգտվեցին վրաց մենշևիկները, որոնք նոյեմբերի 13-ին ստիպողաբար Հայաստանի Հանրապետության վզին փաթաժած համաձայնագրով իրենց գործերը մտցրեցին Լոռվա , , չեզոք գոտին , , և զբաղեցին այն: ¹ Նարսի, Ալեքսանդրապոլի և Լոռվա անկմանը հետևեց նոյեմբերի 29-ին իջևանի կողմից խորհրդային Ռուսաստանի 11-րդ կարմիր բանակի 20-րդ հրաձգային դիվիզիայի գորամասերի ներխուժումը Հայաստան: Հայկական բանակը, որն այդ ուղղությամբ ուներ ընդամենը 2000 զինվոր, ի վիճակի չէր և չէր էլ ձգտում մարտնչել թվով մի քանի անգամ գերազանցող ռուսական զորքերի և նրանց առաջապահում Հայաստան մտած 1500 հոգուց բաղկացած Հայկական առանձին զնդի դեմ, առանց դիմադրության վայր դրեց գեներ: Նույն օրը իջևանում Հայաստանի Հեղկոմը հանդես էր գալիս Հայաստանի խորհրդային սոցիալիստական հանրապետության հայտարարություն մասին հռչակագրով: ² Դեկտեմբերի 1-ին Երևանում գտնվող խորհրդային Ռուսաստանի լիազոր ներկայացուցիչ Բորիս Լեզրանը ամիշապես դիմեց Հայաստանի Հանրապետության կառավարությանը ստեղծված իրավիճակից դուրս գալու համար ընդունել Հայաստանում խորհրդային կարգեր հաստատվելու մասին որոշում: Նույն օրը կառավարությունը ընդունեց համապատասխան որոշում, որը հստակ երևում է վարչապետ Սիմոն Վրացյանի կողմից ստորագրած հետևյալ փաստաթղթերից. , , Բյուրոն, Ֆրակցիան, կառավարությունը որոշեցին ընդունել կարմիրների առաջարկը սովետիզացիայի մասին... , : ³ Հաջորդ օրը դեկտեմբերի 2-ին Հայաստանի Հանրապետության կառավարությունը հրաժարվեց իշխանությունից և այն հանձնեց ռազմական նախարար Դրոյին, որն էլ նույն օրը Լիզրանի հետ կնքեց համաձայնագիր, որի առաջին կետով , , Հայաստանը հայտարարվում է Անկախ Սոցիալիստական խորհրդային Հանրապետություն, : ⁴ Դեկտեմբերի 2-ին հրատարակվում է նաև ՀԽՍՀ ամբողջ բանակի հրամանատար Դրոյի և ՌԽՖՍՀ կոմիսար Սիլինի ստորագրությամբ թիվ 1 հրամանը՝ Հայաստանի Հանրապետության բանակը ՀԽՍՀ կարմիր բանակի վերակազմավորելու մասին: Այս հրամանի համաձայն հին բանակը ոչ թե կազմացվեց, այլ վերակազմավորվեց նոր տիպի բանակի: Նրա բոլոր զորամասերը մնում էին իրենց նախկին վայրերում, իսկ կազմերը շարունակում էին ծառայությունը: ⁵

- 1 Հայ ժողովրդի պատմություն, հ.7, էջ 130:
2 Հայ ժողովրդի պատմություն, հ.7, էջ 118:
3 ՀՀ պր. 199, ց.1, գ.248, թ.2:
4 Ա.Վրացյան, Հուշեր մոռնիկ անցյալից, , , Հայրենիք, , , 1923, նոյեմբեր, թիվ 1: Հայաստանի Հանրապետություն, Փարիզ, 1928, էջ 439:
5 , , Գոմուհիստ, , , 2 դեկտեմբերի 1920, թիվ 1: , , Բանբեր Հայաստանի արևելյանների, , , Ե., 1976, թիվ 3, էջ 15-16:

ԵՐԵՎԱՆԻ ԳԼԽԱՎՈՐ , , խորհրդային Հայաստանի բանակը 1920-1922 թվականներին , , բաղկացած է երեք բաժիններից:

Առաջին բաժնում քննարկված են Հայկական կարմիր բանակի ստեղծման, կառուցվածքի և համալրման հետ կապված հարցեր: Մասնավորապես ցույց է տրված, որ նախկին մեծաթիվ բանակի թվական կազմի, նրա շարքերից մեծահասակ զինվորների գորացրման, ինչպես նաև զորամասերի վերակազմավորման հետևանքով 1921 թ. հունվարի 1-ի տվյալներով Հայկական կարմիր բանակը բաղկացած էր երեք հետևակային բրիգադներից / յուրաքանչյուրում երկուական հրաձգային զնդեր / , մեկ հեծյալ բրիգադից, հրետանային, մասնագիտական և օժանդակ այլ զորամասերից: Բանակի կազմում կար 6000 սվին, 835 թուր, 44 հրանոթ, 236 զնդացի: ¹ Այս բաժնում նորահայտ փաստերի հիման վրա քննարկված է հայ սպաների Բաքու և Ռյազանի քաղաքներում հարցը, քացահայտվել այդ նոդկալի ոմրի կազմակերպիչների ու նրանց հակառակորդների անուաններն ու զործուներն իրենք, առաջ քաշվել սկզբունքային նոր դրույթներ, որոնք պարզություն են մտցնում առ այսօր պատմագրության մեջ դեռևս զիտական լուրջ քննարկման կարոտ այս հարցում: Հեղինակին հաջողվել է ոչ միայն մշտել աքսորված սպաների թիվն ու անունները, այլև պարզել նրանց հետագա ծակատագիրը՝ աքսորից վերադարձ: Այս բաժնում փորձ է արված նաև վերականգնելու Երևանի բանտում 1921 թ. փետրվարի 16-ի զիշերը լույս 17-ի առավոտյան առանց դատարանի որոշման, Գևորգ Աթրեկյանի անվիջական դեկավարությամբ, զազանաբար սպանված շուրջ 50 կալանավորների անունները, պարզել նրանցից 13-ի ինքնությունը:

Երկրորդ բաժնում նորովի է լուսաբանված Հայկական կարմիր բանակի կողմից Լոռվա , , չեզոք գոտին , , վրաց մենշևիկներից ազատագրելու, Վրաստանի խորհրդայնացման և Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական կոիվներին այդ բանակի զորամասերի մասնակցության հիմնահարցը, ինչպես նաև Ջանգեզուրում նժդհի հայրենասկեր զործողությունները, որի շնորհիվ երկրամասը մնաց Հայաստանի կազմում և չարժանացավ նախիջևանի ու Լեռնային Ղարաբաղի ծակատագրին:

Երրորդ բաժնում հանգամանորեն քննարկված է Հայաստանում քաղաքացիական կոիվների ավարտից հետո Հայկական կարմիր բանակի վերակազմավորման աշխատանքները, հիմնավորվել խաղաղ շինարարության տարիներին մեծաթիվ բանակ չպահելու թևոց, պարզաբանել հայկական հավաքական բրիգադայի, ապա հայկական դիվիզիայի կազմավորման նշանակությունը, որը բխում էր 1921թ. դեկտեմբերի 8-ին թիվ 1-ից Լուրձ-ի և անդրկովկասյան հանրապետությունների միջև կնքված ռազմական դաշինքի սկզբունքներ: Հայկական հրաձգային դիվիզիայի կազմավորվեց 1922 թ. սեպտեմբերի 5-ին՝ Հայկական հավաքա-

1 ԱՊՊԱ, Գ.25873, ց.6, գ.118, ԹԹ.164-170:

կան բրիգադի վերակազմավորման հետևանքով:¹ Հայկական հրաձգային դիվիզիայի հրամանատար նշանակվեց նախկին գնդապետ Անդրեյ Պավելի Մելիք-Շահնազարով, որը 1918-1920 թթ. ծառայել էր Հայաստանի հանրապետության բանակում հեղել հեծյալ գնդի հրամանատար: Դիվիզիայում նշանակումներ ստացան հայկական բանակի նախկին սպաներից շատերը, նրանց թվում՝ շտաբ-կապիտան Վլադիմիր Տամրուշին, որը նշանակվեց դիվիզիայի շտաբի պետ, գեներալ-մայոր խաչատուր Արարատով, որը նշանակվեց դիվիզիայի հրամանատարի տեղակալ և հրետանու պետ: Առաջին հրաձգային գնդի հրամանատար նշանակվեց Ալեքսանդր Միրիմանյանը, երկրորդ գնդին՝ Նիկոլայ խուդաբաշյանը, հեծյալ գնդին՝ Հովսեփ Լազարևը /երեջն էլ նախկին գնդապետներ/: Հրետանու պետի տեղակալ նշանակվեց նախկին կապիտան Նիկոլայ Սիլչո, հրետանային դիվիզիոնի հրամանատար՝ նախկին ուսումնարար Գասպար Եվանգուլովը, մարտկոցի հրամանատարներ՝ նախկին սպաներ Վլադիմիր Սակիլարին, Գևորգ Չալախյանը, Էսկադրոնի հրամանատարներ՝ Գևորգ Չանարժյանը, Պետրոս Ցիտոխյանը, Հովհաննես Բաղրամյանը, գումարտակի հրամանատարներ՝ նախկին կապիտաններ Ալեքսանդր Հովակիմյանը, Միքայել Զիգինովը, ավիացիա-կադրիլիայի հրամանատար, նախկին սպա, ռազմական օդաչու Արթուր Գուլյան-Ռիսկին և շատ ուրիշներ:² Դիվիզիայում հրամանատարական պաշտոնների նշանակված նախկին սպաների մի մասը վերադարձել էր Ռյազանի քաղաքից կամ թուրքական զերուքային:

ԵՐՐՈՐԴ ԳԼՈՒԽԸ՝ „Հայկական հրաձգային դիվիզիան խաղաղ շինարարության տարիներին /1922-1940 թթ./, բաղկացած է վեց բաժիններից:

Առաջին բաժնում ցույց է տրված, թե ինչպես շնորհիվ խորհրդային Հայաստանի կառավարության ձեռնարկած միջոցառումների, դիվիզիան ապահովվեց անհրաժեշտ հրամանատարական և քաղաքական կադրերով, որը հնարավորություն տվեց հաջողությամբ կազմակերպել միավորման անձնակազմի ուսուցման և դաստիարակության գործը, բացահայտված է Ա.Ֆ. Մյասնիկյանի անվան հայկական միացյալ ռազմական դպրոցի դերը այդ խնդրում:³

Երկրորդ բաժնում հանգամանորեն լուսաբանված է միավորման անձնակազմի մարտական և քաղաքական ուսուցման կազմակերպման գործընթացը, ցույց տրված այդ գործում դիվիզիայի հրամանատարությանը խորհրդային Հայաստանի կառավարության, Կովկասյան կարմիրգրոշ բանակի ռազմահեղափոխական խորհրդի, ինչպես նաև ՀԽՍՀ ռազմաօդային Գալի ցուցաբերած օգնությունը: Միավորման գործառնությունն ու առանձին ստորաբաժանումներին զգալի օգնություն ցույց

1 ՍՏԳԱՆ, ֆ. 25873, ց. 1, գ. 1539, թ. 443; ֆ. 216, ց. 3, գ. 397, թ. 443; գ. 480, թ. 13:

2 ՍՏԳԱՆ, ֆ. 1535, ց. 1, գ. 2, թթ. 46-121:

3 ՀՀ ՆԳՐԱՆ, ֆ. 148, ց. 1, գ. 26, թ. 290, գ. 250, թթ. 35-42; ֆ. 112, ց. 1; գ. 985, թ. 8; ֆ. 688, ց. 2, գ. 1, թթ. 38-39:

տվեցին նաև հանրապետության այն շրջանների կուսակցական-խորհրդային կազմակերպությունները, որոնց տարածքներում տեղաբնակներ էին տվյալ գործառնությունն ու ստորաբաժանումները: Այդ օգնությունը դրսևորվեց շեփական աշխատանքների միջոցով: Դիվիզիայի մարտական պատրաստության բարձրացման, անձնակազմի ուսուցման և դաստիարակության գործի բարելավման վրա մեծ ազդեցություն թողեցին 1924-1925 թթ. ԲԳԿԻ-ում իրականացված այն արմատական միջոցառումները, որոնք պատմության մեջ հայտնի են ռազմական բարենորոգումներ անվամբ: Բարենորոգումների հիմնական նպատակը զինված ուժերի մարտունակության ամրապնդումն էր, նրանց թվական կրճատումը՝ երկրի տնտեսական հնարավորությունների և խաղաղ պայմանների համապատասխան, իսկ խնդիրները՝ բանակի համալրման երկբային-կադրային նոր սկզբունքի կիրառումը, ազգային գործառնությունների կազմակերպումն ու ամրապնդումը, զինված ուժերի ղեկավար մարմինների կազմակերպչական վերակառուցումն ու ամրապնդումը, զինված ուժերի մատակարարման ավելի հստակ համակարգի ստեղծումը, գործառնությունների և գործառնությունների կազմակերպչական հաստիքային կառուցվածքի փոփոխումը, հրամանատարական կադրերի պատրաստման համակարգի վերափոխումը, միանձնյա ղեկավարություն մտցնելը, պարտադիր զինվորական ծառայության մասին օրենքի ընդունումը, բանակի և նավատորմի անձնակազմի զաղափարաբաղաչական դաստիարակության բարելավումը և այլն:¹ Ռազմական բարենորոգումների կիրառման ընթացքում իրականացված միջոցառումները ամրապնդվում են պարտադիր զինվորական-ծառայության մասին ԽՍՀՄ Կենտրոնականի և Ժողովրդային կողմից 1925 թ. սեպտեմբերի 18-ին ընդունված օրենքով, որը նվազեցրեց ԽՍՀՄ 1924 թ. Սահմանադրության դրույթներից, հայրենիքի պաշտպանությունը համարեց ԽՍՀՄ 19-ից մինչև 40 տարեկան լուրջաչափով բաղաժանգ սրբազան պարտք: Օրենքը ընդգծելով ԲԳԿԻ-ի դասակարգային բնույթը սահմանեց, որ ԽՍՀՄ զինված պաշտպանությունը կառավարվում է միայն աշխատավորության կողմից: ԲԳԿԻ-ի համալրման դասակարգային սկզբունքը, որը հանդիսանում էր ԽՍՀՄ զինված ուժերի շինարարության կարևորագույն սկզբունքներից մեկը, աստիճանաբար, կիրառվում է նաև հայկական դիվիզիայում: 1923 թ. սեպտեմբերի 15-ի տվյալներով դիվիզիայի կազմի բանակայինների 4%-ը կազմում էին բանվորները, 86%-ը՝ գյուղացիները, 10%-ը՝ ալլը: 1933 թ. բանվորները կազմեցին 19%, գյուղացիները 69,7%, ալլը՝ 11,3%: Դիվիզիայի ավագ հրամկազմը գերազանցապես բաղկացած էր նախկին սպայական կադրերից, մնացած հրամկազմը ծագում էր ալլ խավերից: Հաջողությամբ լուծելով բանվորական և գյուղացիական խավերից հրամանատարական կադրերի պատրաստման խնդիրը, բավականաչափ փոփոխություն

1 Советская военная энциклопедия, т. 2, м., 1976, с. 190.

կրեց նաև դիվիզիայի հրամկազմի սոցիալական տեսքը: Եթե 1923 թ. սեպտեմբերի 15-ի դրությամբ բանվորները կազմում էին հրամկազմի $3,2\%$ -ը, գյուղացիները՝ $25,7\%$ -ը, իսկ ալլը՝ $81,1\%$ -ը, ապա 1930 թ. հունվարի 1-ի տվյալներով բանվորների կազմեցին՝ $26,6\%$, բարակները՝ $3,2\%$, գյուղացիները՝ $42,1\%$, ծառայողները՝ 22% , ալլը՝ $6,5\%$ ։¹

Ինչպես ուղղակի կամ էր ասել, ԽՍՀՄ-ում սոցիալիզմի հաղթանակի, իսկ իրականում ստալինյան բռնությունների և վարչարամայական հասարակարգի հաստատման հետևանքով, 30-ական թվականների վերջերին երկրում վերացվեցին այսպես կոչված շահագործող դասակարգերը և մնացին միայն բանվոր դասակարգը, գյուղացիությունը և նրա ծոցից ելած աշխատավոր մտավորականությունը: ԽՍՀՄ երկրորդ սահմանադրությունը, որն ընդունվեց 1936 թ., հայրենիքի պաշտպանության գործի համարեց ԽՍՀՄ յուրաքանչյուր քաղաքացու սրբազան պարտքը: Դա իր արտացոլումը գտավ նաև բանակի, ինչպես նաև հայկական դիվիզիայի սոցիալական կազմի վրա, 1937 թ. դիվիզիայի սոցիալական կազմի բաղկացած էր միայն բանվորներից, գյուղացիներից և մտավորականությունից: Ատենախոսության մեջ քերված են համապատասխան տվյալներով աղյուսակներ:

Այս բաժնում վերլուծության է ենթարկվել նաև դիվիզիայի անձնակազմի թվական և ազգային կազմը, բերվել համապատասխան աղյուսակներ:

Երրորդ բաժնում լուսաբանված է հանրապետության մշակութային և անտեսական շինարարության աշխատանքներին դիվիզիայի մասնակցության հարցը: Այդ մասնակցությունը ամենից առաջ արտահայտվեց կարմիր բանակայինների անզրագիտության վերացման և գյուղական բնակչության լայն շրջաններում քաղբածնի ծավալած մշակութային-լուսավորչական աշխատանքներով: Քաղբածինը հասել էր այն բանին, որ ծառայության երկու տարիների ընթացքում անզրագետ զինվորները ձեռք էին բերում կրթության անհրաժեշտ նվազագույնը և գորացորվում որպես զրազետ մարդիկ: Նրանք իրենց հերթին գյուղում տանում էին մշակութային-լուսավորչական լայն աշխատանքներ: Քացի դրանից դիվիզիան ակտիվ մասնակցություն ցուցաբերեց ժողովրդական տնտեսության վերականգնման և վերակառուցման, սոցիալիզմի տնտեսական հիմքի ստեղծման աշխատանքներին: Սկզբում դա արտահայտվեց շաբաթօրյակների միջոցով առանձին գյուղերի նկատմամբ շահական աշխատանքների ծավալմամբ,² իսկ հետագայում գյուղի վերափոխման համար անհրաժեշտ կադրեր պատրաստելու, ինչպես նաև ինդուստրիալացման և կոլեկտիվացման փոխտնտեսությունների բաժանորդագրության կամ պանիաներին ցույց տված ակտիվ մասնակցությամբ:

Չորրորդ բաժնում վեր են հանվել մարտական և քաղաքական ուսուցման

1 ՍՊԳՆԱ, ֆ. 25873, ց. 1, գ. 588, թ. 84; ՀՀ ՀՊԽՊՊՆԱ, ֆ. 1, ց. 4, գ. 167, թ. 10; ց. 11, գ. 284, թ. 3:

2 ,,Կարմիր զինվոր,, 19 սեպտեմբերի 1923:

բնագավառում դիվիզիայի ձեռք բերած հաջողությունները, ցույց տրվել դրանց պատճառները ու առանձնահատկությունները, որոնք հիմնականում պայմանավորված էին ԽՍՀՄ տնտեսական զարգացման բուռն վերելքով, պաշտպանական հզոր արդյունաբերության ստեղծումով: Հայկական դիվիզիան, հանդիսանալով ԲԳԿ-ի մասերից մեկը, նույնպես քաղաքացիական պատերազմի ժամանակ ստացավ կատարելագործված հրացաններ, ձեռքի և հասողային նոր զնդացիներ, թեթև և հաուքիցային հրանոթներ, նույնիսկ տանկեր և ինքնաթիռներ, որոնք հնարավորություն տվեց միավորման կազմում ստեղծել տանկային վաշտ և ալլը:³ Դիվիզիան ամբողջությամբ իր նյութական ու տնտեսական հիմքը, հանդերձանքով ապահովեց ողջ անձնակազմը, նոր միջոցներ ձեռք բերեց գորանոցների, հրաձգարանների, հրամքակազմի համար բնակելի շենքեր կառուցելու համար և ալլը: Այդ ամենը հնարավորություն տվեց դիվիզիայի հրամանատարությանը ավելի բարձր մակարդակի վրա դնել միավորման անձնակազմի ուսուցման և դաստիարակության գործը, դիվիզիան մշտապես պահել մարտական պատրաստության վիճակում: Ձեռք բերած հաջողությունների համար դիվիզիան ԽՍՀՄ Կենտգործկոմի նախարարության հրամանագրով 1935 թ. դեկտեմբերի 2-ին կոչվում է պաշտպանության ժողովում, մարշալ Ն.Ե.Վորոշիլովի² անունով, 1936 թ. մայիսի 29-ին պարգևատրվում Կարմիր դրոշի շքանշանով³ իսկ հուլիսի 17-ին Անդրկովկասյան զինվորական օկրուգի հրամանատարի թիվ 0134 հրամանով ստանում 76-րդ համարը:

Հինգերորդ բաժնում ցույց է տրված, որ անձնակազմի ուսուցման և միավորման մարտական պատրաստության բարձրացման բնագավառում դիվիզիայի ձեռք բերած հաջողությունները պայմանավորված էին նաև քաղբածնի և գորամասերի կուսակցական կազմակերպությունների կողմից տարվող արդյունավետ կուսակցական-քաղաքական աշխատանքով: Կուսակցական-քաղաքական աշխատանքը ընդգրկել էր դիվիզիայի ողջ գործունեությունը, անձնակազմին մոբիլիզացրել միավորման մարտական պատրաստության անշեղորեն բարձրացման և նրա հզորության կրկնապատկման համար: Կուսակցական-քաղաքական աշխատանքի հիմնական նպատակը հանդիսանում էր դիվիզիայի ողջ անձնակազմի համախմբումը մարտական պատրաստության պլանների, ծրագրերի ու խնդիրների լրիվ և որակյալ կատարման, ձեռքի տակ եղած գեների, ռազմական տեխնիկայի ու զինվորական մասնագիտության տիրապետման ռազմական գործի պատշաճ կերպով ուսանելու համար: Բաժնում լուսաբանված է նաև դիվիզիայի զինվորական մամուլի՝ քաղբածնի ,,Կարմիր զինվոր,, պաշտոնաթերթի, ,,Կարմիր մարտիկ,, հանդեսի և զնդային թերթերի աշխատանքը:

1 ՍՊԳՆԱ, ֆ. 25873, ց. 6, գ. 279, թ. 140:

2 "Известия", 30 мая 1936.

3 ՌԳՊՆԱ, ֆ. 51-րդ զվարդիական հրաձգային դիվիզիայի, ց. 1, գ. 2, թ. 3:

վեցերորդ՝,,Պիլիգիան պատերազմի նախօրյակին,, բաժնում հանգամանո-
րեն վերլուծության է ենթարկվել Երկրորդ համաշխարհային պատերազմի նախօր-
յակի միջազգային իրադրությունը, բացահայտվել երկրի պաշտպանության ամրա-
պնդման և նարմիր բանակի հզորության ուժեղացման ուղղությամբ ԽՍՀՄ կառա-
վարության միջոցառումները: Հատուկ ուշադրություն է դարձված 1937 թ. մա-
յիս-1939 թ. փետրվար ընկած ժամանակաշրջանում կիրառված ստալինյան անհիմն
բռնաճնշումներին, որոնց զոհ գնացին բազմաթիվ անմեղ մարդիկ, այդ թվում
շուրջ 40 հազար զինվորականներ, որոնց թվում խորհրդային զինված ուժերի
բարձր հրամանատարական կազմի բացարձակ մեծամասնությունը: Բռնաճնշումներ-
րից գերծ չմնաց նաև հայկական դիվիզիան, որը նույնպես կորցրեց իր հրամա-
նատարական կազմի լավագույն մասը, գնդակահարվեցին և բռնությունների զոհ
գնացին նաև հայկական բանակի 1921 թ. հունվարյան արտոնից վերադարձած,
հայկական դիվիզիայում, կամ ժողովրդական տնտեսության օրհրդերը բնագավառնե-
րում ծառայության անցած նախկին սպաներից շատերը: Այս ամենը չէին կարող
ծանր չափով ինչպես ամբողջ ԲԳՆԲ-ի, այնպես էլ հայկական դիվիզիայի մար-
տունակության վրա: Բանակի պատերազմի նախօրյակին փաստորեն գրկվել էր իր
բանիմաց, մարտունակ և տեսական հարուստ փորձ ունեցող, զրազետ, բարձրաս-
տիճան հրամադրակազմից, որը և դարձավ Հայրենական մեծ պատերազմի առաջին
ամիսներին խորհրդային զորքերի կրած ահեղ չափերի հասնող կորուստների
և անհաջողությունների պատճառներից մեկը: Բաժնում լուսաբանված է նաև
նարմիր բանակի համալրման խոռո՝ երկրային-կազմային հնացած համակարգից՝
համալրման կազմային համակարգին անցնելու խնդիրը, որը պայմանավորված էր
ԽՍՀՄ տնտեսական հզորության մեծացմամբ: Նադրային համակարգին անցնելու ամ-
րապնդվեց՝,,Համերդհանուր զինվորական ծառայության մասին,, օրենքով, որն
ընդունվեց 1939 թ. նոյեմբերի 1-ին:¹ Բանակի համալրման երկրային-կազմա-
յին խոռո համակարգից՝ կազմային միասնական համակարգի անցնելու ուղևեց-
վեց նաև նարմիր բանակի թվական կազմի ավելացումով: Այսպես, օրինակ, նրն
1933 թ. ԲԳՆԲ-ի կազմում կար 885000 մարդ, 1936 թ. հունվարի 1-ին՝
1110000 մարդ, 1938 թ. հունվարի 1-ին՝ 1513400 մարդ, ապա 1939 թ. օգոս-
տոսի 31-ին այն կազմեց ավելի քան 2 միլիոն, իսկ 1941 թ. հունիսի 22-
ին՝ 4901652 մարդ:² Համալրման միասնական կազմային անցման շրջանում անի-
րավացիորեն վերակազմավորվեցին կարմիր բանակի գոյություն ունեցող ազգա-
յին գործադրությունները այն կողմ պատճառաբանությամբ, որ դրանք կառուց-
ված են երկրային սկզբունքով: Հենց այդպես էլ նշված էր ԽՍՀՄ ժողովրդիկո-
րի և Համ/Բ/Կ կենտկոմի 1938 թ. մարտի 7-ի՝,,ԲԳՆԲ-ի ազգային գործա-

1 История второй мировой войны 1939-1945 гг., т. 2, М., 1974, с. 199.

2 Грий секретности снят. Потери Вооруженных Сил СССР в войнах, боевых действиях и военных конфликтах, М., 1993, с. 139.

սերի և միավորումների մասին,, որոշման մեջ. ,,Ազգային գործադրություններ կա-
ռուցված են երկրային սկզբունքով, որոնք նախկինում համապատասխանում
էին ամբողջ ԲԳՆԲ-ի շինարարության սկզբունքներին: Կատարելով իրենց դա-
կան դերը քաղաքական կոմիտեների տարիներին, ազգային միավորումներն
այժմ չեն կարող արդարացնել իրենց կոչումը,,¹ Հենվելով նորահայտ փա-
սների հիման վրա ասեմախոսը քննադատական վերաբերմունք է ցուցաբերել այդ
որոշմանը, ցույց տալով դրա կեղծ լինելը, բանի որ ազգային գործադրու-
թյունների մի զգալի մասը, որոնց թվում հայկական և վրացական 1-ին դիվի-
զիաները դեռևս 1936 թ. համալրվում էին միայն կազմային սկզբունքով,
ուստի ենթակա չէին վերակազմավորման: Հետևապես, այդ որոշումը ավելի
շուտ քաղաքական բնույթ ուներ, քան ռազմական, քանի որ ոտնահարվում էր
ինքնիշխան միությունական հանրապետությունների սահմանադրական իրավունք-
ները, սահմանափակում նրանց առանց այն էլ նեղ ինքնուրույնությունը,
այն դարձնում ձևական: Ամբողջատիրական, վարչահրամայական պետության այդ
հակաազգային, պատերազմի նախօրյակին հաղմա կատարած սխալ որոշման բա-
ցասական հետևանքները շուտով զգացնել տվեցին իրենց մեծ հայրենական
հենց առաջին իսկ օրերին և ստիպեցին խորհրդային կառավարությանը 1941թ.
նոյեմբերին նոր որոշում ընդունել ազգային գործադրությունների կազմավո-
րելու մասին:

ՉՈՐՐՈՐԴ ԳԼՈՒԿԸ՝,,Հայկական ազգային գործադրությունները Հայրենա-
կան մեծ պատերազմի տարիներին /1941-1945 թթ./, բաղկացած է երկու բա-
ժիններից: Առաջին բաժնի սկզբում համառոտակի ցույց է տրված այն սպառնա-
լից վիճակը, որը կախվեց ԽՍՀՄ, այդ թվում նաև խորհրդային Հայաստանի
զլիին՝ հաշիսաակն Գերմանիայի հանկուրձակի հարձակման հետևանքով, խուսվել
պատերազմի առաջին շրջանում խորհրդային կառավարության ձեռնարկած միջո-
ցառումների մասին, համառոտակի վերլուծվել ռազմաժախտում ամեղմված ծանր
իրադրությունը: Այնուհետև ցույց է տրված, որ նշվելով պատերազմական իր
իրադրությունից ընտղ պայմաններից, ԽՍՀՄ պաշտպանության պետական կոմիտեն
1941 թ. նոյեմբերի 13-ին որոշում ընդունեց նարմիր բանակի կազմում ազ-
գային նոր գործադրություններ և գործադրեր ստեղծելու մասին: Ցալով այդ
որոշման զնահատակներ, ասեմախոսը գտնում է, որ դա ժամանակին ընդունված
և իրա կարևոր որոշում էր, որը բնագործ էր կյանքի զահանջով: Սենտրո-
նի համար ոչ միայն ձեռնաու, այլև հարմար էր, որ Անդրկովկասի, Միջին
Ասիայի հանրապետություններն ու Ղազախստան տեղում, իրենց նյութական և

1 И КИСС о Вооруженных Силах Советского Союза, документы 1917-1968, М., 1969, с. 294.

մարդկային միջոցների հաշվին համալրեն և կազմավորեն նոր գործառնականություններ, որտեղ կգերակշռեն տվյալ հանրապետության ժողովրդի ներկայացուցիչները և հեշտությամբ, նրանց ազգային լեզուներով կտարվեն մարտական ուսուցման և քաղաքական պաշտպանության աշխատանքներ: Ազգային գործառնականությունների և գործառնական վերոհիշյալ որոշումներ օրենսդրորեն ամրապնդվեց 1944 թ. փետրվարի 1-ին, երբ խՍՀՄ Գերագույն խորհրդի առաջին գումարման 10-րդ նստաշրջանն օրենք ընդունեց ազգային գործային կազմավորումների մասին: Համաձայն այդ օրենքի յուրաքանչյուր միությունական հանրապետություն ուներ իր հանրապետական գործային կազմավորումը:

Իրենց սահմանադրություններով մեջ համապատասխան փոփոխություններ մտցրեցին նաև միութենական բոլոր հանրապետությունները, որոնց թվում խորհրդային Հայաստանը: Այսպես, 1944 թ. մարտի 18-ին Հայկական խՍՀ Գերագույն խորհրդի առաջին գումարման ութերորդ նստաշրջանը քննեց հայկական գործառնականությունների կազմավորման հարցը և ՀԽՍՀ սահմանադրությունը լրացրեց 15-րդ հոդվածով՝ հետևյալ բովանդակությամբ. «Հայկական խորհրդային սոցիալիստական հանրապետությունը ունի իր հանրապետական գործային կազմավորումները»:¹

Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանում ազգային գործառնականությունների վերականգնումը նարմիր բանակի համակարգում ունեցավ ռազմական և քաղաքական կարևոր նշանակություն: Նախ եւ ավելի ամրապնդվեց բանակը և կարճ ժամանակամիջոցում նրա շարքերի մեջ ներգրավվեցին մարտական նոր ուժեր, և հետո միութենական հանրապետությունների կառավարությունները լիիրավ իրավունք էին ստանում ոչ միայն սերտ կապեր հաստատել այդ միավորումների հետ, այլև հնարավորություն էին ստանում տեղերում ինքնուրույն և օգնություն կերպով լուծելու կարևոր շատ հարցեր, որոնք մեծ չափով նպաստելու էին ազգային գործառնականությունների արագ ձևավորման և նրանց մարտունակության ամրապնդման վրա: Այնուհետև ցույց է տրված, որ պատերազմի առաջին շրջանում միայն Անդրկովկասում կազմավորվեց 17 ազգային դիվիզիա. դրանք էին՝ Հայկական 89-րդ, 261-րդ, 390-րդ, 408-րդ և 409-րդ, ադրբեջանական 223-րդ, 396-րդ, 402-րդ և 416-րդ, վրացական 224-րդ, 242-րդ, 296-րդ, 349-րդ, 392-րդ, 394-րդ, 406-րդ և 414-րդ հրաձգային դիվիզիաներ: Եթե դրանց ավելացնենք նաև 1920-ական թվականների սկզբներին այդ հանրապետություններում կազմավորված Հայկական 76-րդ, Ադրբեջանական 77-րդ և վրացական 47-րդ և 63-րդ լեռնահրաձգային դիվիզիաները, որոնք ավելի վաղ էին համալրվել տվյալ հանրապետությունների մարդկային և նյութական միջոցների հաշվին, ձեռք բերել իրենց նախկին ազգային տեսքը և մեկնել ռազմաճակատ, ապա դուրս է գալիս, որ միայն Անդրկովկասում

1. «Սովետական Հայաստան», 19 մարտի 1944, էջ 1:

կազմավորվեցին 21 ազգային դիվիզիաներ: Բացի այդ երեք հանրապետությունների տարածքում կազմավորվեցին կամ վերահամալրվեցին երկու տասնյակից ավելի այլ դիվիզիաներ ու բրիգադաներ, որոնց ազգային կազմը գերազանցապես կազմված էր հայերից, վրացիներից և ադրբեջանցիներից: Այսպես, օրինակ, Հայաստանում կազմավորվեցին կամ վերահամալրվեցին՝ 61-րդ, 136-րդ /15-րդ զվարդիական/, 151-րդ, 236-րդ, 320-րդ և 406-րդ, Վրաստանում՝ 276-րդ, 351-րդ, 386-րդ, 388-րդ և 417-րդ, Ադրբեջանում՝ 271-րդ, 317-րդ, 398-րդ, 400-րդ և 404-րդ հրաձգային դիվիզիաները, որոնց անձնակազմերի կեսից ավելին կազմում էին հայերը, վրացիներն ու ադրբեջանցիները: Այդ մասին բաժնում բերված են համապատասխան թվական տվյալներ: Այնուհետև, առանձին-առանձին լուսաբանված են հայկական բոլոր վեց դիվիզիաների կազմավորման աշխատանքները, յուրաքանչյուրի գինվածության, նյութական և մարդկային միջոցներով համալրվածության վերաբերյալ բերված նորահայտ արխիվային տվյալներ, վերլուծության ենթարկվել դրանք, կազմվել աղյուսակներ, որտեղ արտացոլված են միավորումների ազգային կազմը, հաստիքով նախատեսված համալրվածության և սպառազինության իրավիճակը:

Երկրորդ բաժնում լուսաբանված է հայկական դիվիզիաների անցած մարտական ուղին, ցույց տրված հաղթանակի գործում յուրաքանչյուր միավորման ներդրած ավանդը, տրված նրանց հեռապատերազմյան ծակատագրերը: Այստեղ հատուկ ուշադրություն է դարձված հայ պատմագրության մեջ առ այսօր չլուսաբանված մի կարևոր հարցի վրա, որը վերաբերում է դեռևս 1942 թ. հոկտեմբերին առաջին մարտերից անմիջապես հետո Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան անարդարացի կերպով բրիգադայի վերակազմավորելուն: Ապագադանիացված արևիվային նոր ժաստերի հիման վրա հեղինակին հաջողվել է պարզել վերադաս հրամանատարության այդ չար մտադրությունը խափանելու գործում Հայաստանի կոմկուսի առաջին քարտուղար Գրիգոր Հարությունյանի կատարած դերը:² Այս բաժնում լուսաբանված է նաև Բեռլինի ծակատամարտին ակտիվ մասնակցած և նրա անտիկ ամրոցների վրա հաղթանակի դրոշ պարգած նարմիր բանակի միակ ազգային գործառնական՝ Հայկական 89-րդ Բաժանյան, ետակի շքանշանակիր հրաձգային դիվիզիայի կազմացման վերաբերյալ բարձր հրամանատարության 1945 թ. հունիսի սկզբներին ունեցած նոր մտադրությունը, պարզված այն խափանելու համար կատարված վճռական քայլերը,³ որի հետևանքով դիվիզիան

1 Ռ. Գրիգորյան, Գ. 56, Գ. 12214, Գ. 405, Թ. 194, 278; Գ. 743, Թ. 48, Գ. 877, Թ. 5; Գ. 982, Թ. 3-11, 65; Գ. 990, Թ. 177-178; Գ. 992, Թ. 158; Գ. 994, Թ. 166; Գ. 995, Թ. 204, Գ. 996, Թ. 134-148:

2 Ռ. Գրիգորյան, Գ. 32, Գ. 11302, Գ. 46, Թ. 116:

3 ՀՀ ՀՊՊՖ ԳՆԱ, Գ. 1, Գ. 34, Գ. 385, Թ. 169:

ոչ միայն չկազմացրվեց, այլև իր ողջ անձնակազմով և զբաղված ավարով հանդերձ հանդիսավոր պայմաններում վերադարձավ Հայաստան:

ԵՅՐԱՓԱՅԱՆ ՄԵՋ ընդհանրացված են ուսումնասիրության արդյունքները, որոնք հիմնականում հանգեցնում են հետևյալ եզրահանգումներին.

1. 1918 թ. մայիսի 28-ին Հայաստանում պետականության վերականգնման հետևանքով ստեղծվեց Հայաստանի հանրապետության բանակը, որը տվյալ ժամանակի չափանիշներով բավականաչափ մարտունակ և լավ զինված ուժ էր, որի շարքերում հաշվվում էր շուրջ 40 հազար զինվոր ու սպա: Նրա հիմնական խնդիրը հանդիսանում էր նորաստեղծ պետության սահմանները արտաքին թշնամուց պաշտպանելու սրբազան գործը: Այդ բանակը, որը կազմակերպված էր ռուսական բանակի կազմակերպչական համակարգի սկզբունքներով և կառավարվում էր ռուսական զինվորական կանոններով, գլխավորապես համալրված էր մարտական հարուստ փորձ և զինվորական պատշաժ կրթություն ունեցող ռուսական բանակի հայ զինեղաներից, սպաներից ու ենթասպաներից, որոնք ոչ մի կուսակցության անդամ չէին համարվում: Չնայած երկրի շրջակայումս և միջազգային անբարենպաստ պայմաններին, նրանք կարողացան ոչ միայն համապատասխան մակարդակի վրա պահել անձնակազմի մարտական ուսուցման և պատրաստականության աշխատանքները, այլև թշնամու նկատմամբ մի շարք ծակառկերում տանել հաղթանակներ, հանրապետությանը վերադարձնել հակառակորդի կողմից զավթված մի շարք տարածքներ և Բաթումի պարտադրված, ստորագուցիչ դաշնագրով նախատեսված Հայաստանի շուրջ 12 հազար քառ. կմ տարածքը հասցնել ավելի քան 70 հազար քառ. կմ-ի: Չնայած վերոհիշյալ հաջողություններին, Հայկական բանակն ի վերջո ստիպված էր տեղի տալ քեմալական թուրքիայի և խորհրդային Ռուսաստանի զինված ուժերի առջև՝ չստանալով դաշնակից արևմտյան խոշոր տերություններից և որևէ մեկի օգնությունը:

2. Հայաստանի խորհրդայնացումից հետո Հայկական կարմիր բանակը ոչ թե վերացվեց, այլ 1920 թ. դեկտեմբերի 2-ին Հյուսիս ամբողջ բանակի հրամանատար Դրոյի և ՌոֆՍՀ կոմիսար Սիլիսի ստորագրած թիվ 1 հրամանի համաձայն վերակազմավորվեց Հյուսիս կարմիր բանակի: Հայկական կարմիր բանակի շարքերում իրենց զինվորական ծառայությունը շարունակեցին 6 նախկին զենեղալ, 19 գնդապետ, 21 փոխգնդապետ, 18 կապիտան, մի քանի հարյուրից ավելի զանազան աստիճանների սպաներ: Բանակի թվաքանակի կրճատման, ինչպես նաև ռազմաօդային Ալիս Նուրիջանյանի և Համառուսաստանյան արտակարգ հանձնաժողովի ու 11-րդ նախարար բանակի հատուկ բաժնի ներկայացուցիչ Գևորգ Աթաբեկյանի ծախսության հետևանքով, 1921 թ. հունվարի վերջերին բանակում ծառայող և չծառայող հայ սպաների մեծամասնությունը՝ շուրջ 1400 հոգի, արքայազան են Հայաստանից Բաքու և Ռյազան, զգալի վնաս պատճառելով նորաստեղծ բանակի մարտունակությանը, արդարացի վրդովմունք առաջացնելով ժողովրդի

մեջ, դառնալով 1921 թ. փետրվարին ժողովրդական ապստամբության պատճառներից մեկը: Հայ սպաների նկատմամբ կատարված հաշվեհարդարը նույնիսկ հակասում էր կոմունիստական կուսակցության կողմից նոր տիպի բանակ ստեղծելու հիմնադրույթներին, համաձայն որի առանց հին զինվորական կադրերի օգտագործման անհնարին է ստեղծել կենտրոնացված կանոնավոր բանակ: Հայ սպաների արքայազանը դեմ են եղել Հայհեղկոմի նախագահ Սարգիս Նասյանը, հեղկոմի անդամներ արտաքին գործերի ժողկոմ Ալեքսանդր Բեկզադյանը, Ալեքսանդր Մուսկալանը, ՌոֆՍՀ-ում Հայաստանի լիազոր ներկայացուցիչ Սահակ Տեր-Գաբրիելյանը, հետագայում նաև Հայաստան եկած, Հյուսիս ժողկոմխորհի նախագահ, ռազմաօդային Ալեքսանդր Մյասնիկյանը, որոնք ջանքերի շնորհիվ 1921 թ. մայիս-հունիս ամիսներին բոլոր հայ սպաները ազատվեցին քստորից և նրանց մի մասը վերադարձավ Հայաստան ու շարունակեց ծառայությունը Հայկական կարմիր բանակի շարքերում:

3. Հայկական կարմիր բանակի գործառնությունը 1921 թ. փետրվար-հունիս ամիսներին ընթացքում մասնակցել են Լոռու, Զեզդը գոտին, վրաց մենշևիկների գործերից ազատագրելու գործողություններին, ինչպես նաև Հայաստանում տեղի ունեցած քաղաքացիական կռիվներին: Վերջիններս ավարտից հետո Հայկական կարմիր բանակը վերակազմավորվեց սկզբում քրիզադայի, իսկ 1922 թ. սեպտեմբերին՝ դիվիզիայի, որը մտավ ԲԳԿԻ-ի ընդհանուր համակարգի մեջ:

Հայկական հրաձգային դիվիզիայի կազմավորումը և ԲԳԿԻ-ի ընդհանուր համակարգի մեջ մտնելը տվյալ ժամանակաշրջանում առաջադեմ քայլ էր Հայկական կարմիր բանակի պատմության մեջ: Ամենից առաջ դա հնարավորություն տվեց ավելի լավ օգտագործել քաղաքացիական կռիվների և օտարերկրյա զավթիչների դեմ մղված մարտերի դպրոցն անցած ԲԳԿԻ-ի գործառնությունը հարուստ փորձը: Հայկական կարմիր բանակի անձնակազմի թվաքանակի զգալի կրճատումով և քրիզադայի, ապա դիվիզիայի ստեղծումով, հազարավոր աշխատավոր ձեռքեր ազատվեցին զինվորական ծառայությունից, որոնք խիստ անհրաժեշտ էին նորաստեղծ հանրապետության քայքայված տնտեսության վերականգնման համար: Ելնելով ԲԳԿԻ-ի շինարարության փորձից, միասնականացվեց Հայկական հրաձգային դիվիզիայի կազմակերպչական կառուցվածքը, համալրման կարգը, անձնակազմի մարտական և քաղաքական ուսուցման, ինչպես նաև նյութական ու սոցիալական ապահովության համակարգը: Հայկական հրաձգային դիվիզիայի հրամանատարությունը հնարավորություն ստացավ մարտական և քաղաքական ուսուցման գործը կազմակերպել համեմատաբար ավելի նորմալ պայմաններում: Նա ստացավ ոչ միայն հայկական բանակի նախկին գորանոցները, հրաձգարաններն ու շինությունները, այլև հնարավորություն ունեցավ օգտվելու նաև Առաժնի կուկայան բանակին պատկանող հանրապետության սահմաններից դուրս գտնվող ամառային ժամբարներին:

4. Հայկական հրաձգային, ապա լեռնահրաձգային դիվիզիան կարևոր դեր է խաղացել ԽՍՀՄ զինված ուժերի համար ազգային զինվորական կազմերի պատ-
րաստման հարցում, կազմեր, որոնք ակտիվ մասնակցություն են ունեցել ոչ
միայն իրենց միավորման, այլև ամբողջ խորհրդային բանակի մարտունակու-
թյան ամրապնդման գործին: Դիվիզիայի շարքերում իրենց նախնական կոմիա-
նություն են ստացել հայազգի 2 մարշալ, ավելի քան 50 գեներալ, 200
գնդապետ, միջին և կրտսեր հրամկազմի մի քանի հազար սպաներ, որոնք ակտիվ
մասնակցություն են ունեցել և իրենց քաջությունը ու ռազմական տաղանդով
աչքի են ընկել Հայրենական մեծ պատերազմում: Նրանցից 4-ը եղել է ռազմաճա-
կատի, 22-ը՝ բանակի, 8-ը՝ կորպուսի, 70-ը՝ դիվիզիայի մասշտաբով պատաս-
խանատու աշխատողներ: Ընդհանուր առմամբ դիվիզիայի շարքերում աճել են
խորհրդային Միության 40 հայ հերոսներ: Դիվիզիայի կազմերը մեծ դեր են
խաղացել Հայրենական մեծ պատերազմի տարիներին կազմավորված հայկական
89-րդ, 261-րդ, 390-րդ, 408-րդ, 409-րդ և Հայաստանի տարածքում ձևավոր-
ված կամ համալրված մի շարք այլ զորամիավորումների ստեղծման գործում:

5. Հայաստանի դիվիզիայի հիմնական խնդիրը խաղաղ շինարարության տարի-
ներին հանդիսանում էր խորհրդային Հայաստանի զինված պաշտպանությունը
արտաքին թշնամիներից, նա, միաժամանակ, կազմակերպական հզոր լծակ հան-
դիսացավ հանրապետությունում իրականացվող մշակութային և տնտեսական շի-
նարարության աշխատանքների բնագավառներում: Դիվիզիայի քաղաքային, շնոր-
հիվ ձեռք առած միջոցառումների, երկրի կուլտուրական ընդհանուր վերելքի,
լիկեյանների ցանցի և նախագորակոչային պատրաստության, հասավ այն բանին,
որ 1930-ական թվականների սկզբին միավորման շարքերից զորացրվում էին
իրենց անգրագիտությունը 100% -ով վերացրած մարդիկ: Դիվիզիան ակտիվ
մասնակցություն ունեցավ նաև հանրապետության ժողովրդական տնտեսության
շինարարության աշխատանքներին: Սկզբում դա կատարվեց շաքաթօրյակների մի-
ջոցով առանձին կառույցների շինարարությանը միավորման կողմից ցույց տրո-
ված օգնությամբ, գյուղական շրջաններում շեֆական աշխատանքների ծավալ-
մամբ, իսկ հետագայում նաև գյուղի սոցիալիստական վերափոխման համար ան-
հրաժեշտ կազմեր պատրաստելու, ժողովրդական տնտեսության զարգացման հոն-
գամյակների առաջնեկների և գլխավոր կառույցների շինարարության աշխա-
տանքներին ակտիվ մասնակցելու միջոցով:

6. Խաղաղ շինարարության տարիներին դիվիզիան հաջողությամբ էր անց-
կացնում մարտական ուսուցումը կատարելագործում անձնակազմի զինվորական
վարպետությունը: Միավորման մարտիկները օր առ օր տիրապետում էին ռազմա-
կան արվեստին՝ մարտական ուսուցումը առավել չափով մոտեցնելով պատերազ-
մական պայմաններին: 30-ական թվականների սկզբից անձնակազմի պատրաստու-
թյունը սկսվեց իրականացվել լեռնային պայմաններում: Ամենամյա տեսչական

ստուգումների ժամանակ դիվիզիան մեկ անգամ չէ, որ արժանացավ բարձր գնա-
հատականների: Մարտական և քաղաքական ուսուցման բնագավառում ձեռք բերած
հաջողությունների համար դիվիզիան կոչվեց ԽՍՀՄ պաշտպանության ժողովում,
մարշալ Վորոշիլովի անունով, պարգևատրվեց Նարմին դրոշի շքանշանով, ան-
ցավ Նարմին բանակի համարային միավորումների շարքը՝ ստանալով 76-րդ հա-
մարը:

7. Անձնակազմի ուսուցման և մարտական պատրաստության բնագավառում
դիվիզիայի ձեռք բերած հաջողությունները պայմանավորված էին նաև քաղաք-
ային, զորամասերի կուսակցական և կոմերիտական կազմակերպությունների կող-
մից տարվող արդյունավետ աշխատանքով, որի հիմնական նպատակը հանդիսանում
էր միավորման ողջ անձնակազմի համալսմամբ՝ մարտական պատրաստության
պլանների, ծրագրերի և խնդիրների լրիվ ու որակյալ կատարման, ձեռքի տակ
եղած գեներալ, ռազմական տեխնիկայի ու զինվորական մասնագիտության տիրա-
պետման, ռազմական գործը պատշաճ կերպով ուսանելու համար: Այդ հարցում
մեծ դեր է խաղացել նաև զինվորական մամուլը, մասնավորապես քաղաքային
, Նարմին զինվոր, թերթը, որը հանդիսացել է դիվիզիայի անձնակազմի ու-
սուցման և դաստիարակության գործում հրամանատարության ամենակազմակերպ
օգնա-
կանը:

8. 1937-1938 թվականները ծանր փորձությունների տարիներ եղան ինչ-
պես ամբողջ Նարմին բանակի և ռազմածովային նավատորմի, այնպես էլ հայկա-
կան դիվիզիայի համար: Անհիմն բռնությունների զոհ դարձան շուրջ 40 հա-
զար զինվորականներ, որոնց թվում ԽՍՀՄ առաջին 5 մարշալներից՝ 3-ը, 5
առաջին կարգի բանակային հրամանատարներից /հավասարագոր է բանակի գեներ-
ալի կոչման/՝ 4-ը, մեկ առաջին կարգի բանակային կոմիսարից՝ 1-ը, 2 ա-
ռաջին կարգի նավատորմի Ֆլագմանից /հավասարագոր է խորհրդային Միության
Նավատորմի ծովակալի կոչման/՝ 2-ը, 9 երկրորդ կարգի բանակային հրամանա-
տարներից /հավասարագոր է գեներալ-լեյտենանտի կոչման/՝ 50-ը, 186 կոմդիլնե-
րից /հավասարագոր է գեներալ-լեյտենանտի կոչման/՝ 154-ը, 28 կորպուսային
կոմիսարներից՝ 25-ը, 64 դիվիզիայի կոմիսարներից՝ 58-ը, 656 գնդապետնե-
րից՝ 401-ը և այլն:

Գնդակահարությունների և բռնությունների զոհ գնացին նաև Հայկական
լեռնահրաձգային դիվիզիայի ծանաչված հրամանատարներից ու քաղաշխատողնե-
րից շատերը, որոնց թվում դիվիզիայի 3 հրամանատարներից՝ 3-ը /Ա.Մելիք-
Շահնազարով, Հ.Արդյան, Ս.Արդյան/, դիվիզիայի 5 զինվորական կոմիսարնե-
րից՝ 4-ը, քաղաքային 4 պետերից՝ 4-ը և այլն:

Բռնաճնշումների հետ մեկտեղ 1938 թ. մարտի 7-ին ԽՍՀՄ ժողկոմխորհ
ու Համ/Կ/Կ Կենտկոմը որոշում էր ընդունել, որ ԲԳԿ-ի ազգային զորամասերն
ու զորամիավորումները համամիութենականի վերակազմավորելու մասին, որի

հետևանքով անօրինական կերպով վերացվեց սահմանադրությամբ միտնված անհատական հանրապետություններին արտոնված ազգային գործառնությունները, որոնք իսկ էլ ավելի սահմանափակելով այդ հանրապետություններին ինքն- իշխանությունը:

Այս ամենը չէին կարող բացասական ծանր ազդեցություններ չունենալ ինչպես մերոյժ Կարմիր բանակի, այնպես էլ հայկական դիվիզիայի ընդհանուր մարտունակության վրա, որի հետևանքները շուտով իրենց զգացնել սկսեցին Հայրենական մեծ պատերազմի առաջին օրերին և ստիպեցին խորհրդային կառավարությանը քանդակել ազատելու բանակ վերադարձնել դեռևս չզնված հարկադրված զինվորականներին, ինչպես նաև 1941 թ. նոյեմբերին որոշում ընդունել ազգային նոր գործառնությունների կազմավորման մասին:

9. Հայրենական մեծ պատերազմի առաջին շրջանում Հայաստանում կազմակերպվեցին 4 նոր ազգային դիվիզիաներ՝ 89-րդ, 261-րդ, 408-րդ և 409-րդ, որոնք գերազանցապես համալրվեցին 76-րդ և 89-րդ և 408-րդ դիվիզիաների կրկին ձեռք բերեց իր նախկին ազգային տեսքը: Հայկական վեցերորդ միավորումը՝ 390-րդ դիվիզիան կազմավորվեց Կերչում: Այս գործառնություններից հինգը՝ 76-րդ, 89-րդ, 390-րդ, 408-րդ և 409-րդ հրաձգային դիվիզիաները եղել են գործող բանակների կազմում և ակտիվորեն մասնակցել մարտական գործողություններին: Հայկական մյուս՝ 261-րդ հրաձգային դիվիզիան ամբողջ պատերազմի տարիներին մնաց Հայաստանում, պահպանեց խորհրդային քաղաքական սահմանը, միաժամանակ երթյալին գումարտակներ ու վաշտեր պատրաստելով ռազմաճակատի համար: Վերոհիշյալ դիվիզիաներից 390-րդ մարտնչեց Կերչում, իսկ 408-րդը՝ Կովկասում: 76-րդ դիվիզիան պատերազմի սկզբին մասնակցեց խորհրդային զորքերի իրանական գործողությանը, ապա՝ Ուկրաինայի հյուսիս-արևելյան շրջանները պաշտպանական մարտերին, Ստալինգրադի և Կուրսկի ճակատամարտերին, Բելոռուսիայի և Մերձբալթիկայի ազատագրմանը՝ արժանանալով 51-րդ զվարդիական կոչման, պարգևատրվելով Լենինի 2 քանչանով, ստանալով Վիտեբսկյան պատվանուն:

Կովկասյան նախաշրջաններից մինչև Կերչ-Ղրիմ-Լեհաստան-Գերմանիա՝ Բեռլին փառապանք մարտական ուղի անցավ Հայկական 89-րդ հրաձգային դիվիզիան՝ արժանանալով թմանյան պատվոգրի անվանման, պարգևատրվելով Կարմիր աստղի, Կարմիր դրոշի և Սուրբ Մովսեսի 2-րդ աստիճանի 2 քանչանով: 9 հայրդիներ արժանացան խորհրդային Միության հերոսի կոչման, իսկ 8-ը՝ դարձան փառքի 2 քանչանի բոլոր աստիճանների լրիվ սպայեր:

Հյուսիսային Կովկաս-Նուբան-Ուկրաինա-Մոլդովիա-Ռումինիա-Հունգարիա-Ավստրիա-Չեխոսլովակիա, այսպիսի մարտական ուղի անցավ Հայկական 409-րդ հրաձգային դիվիզիան՝ արժանանալով Կարմիր դրոշի և Բրատիսլավայի պատվոգրի անվանման, պարգևատրվելով Բոգդան խմելնիցկու 2-րդ աստիճանի 2 քանչանով:

Պատերազմին մասնակցած բոլոր հայկական դիվիզիաներն էլ հակառակորդին պատճառեցին կենդանի ուժի և տեխնիկայի զգալի կորուստներ, վերջինիս մեծ թվով ավար, զենքեր, թշնամուց ազատագրեցին բազմաթիվ բնակավայրեր և իրենց արժանի ավանդը ներդրեցին Հայրենական մեծ պատերազմում Ֆաշիզմի դեմ տարած պատմական հաղթանակի գործում:

Այդ դիվիզիաներից երկուսը՝ 390-րդ և 408-րդ կազմացրվեցին պատերազմի ժամանակ, իսկ 409-րդը՝ հաղթանակից անմիջապես հետո: 51-րդ զվարդիական 76-րդ/ հրաձգային դիվիզիան պատերազմի ավարտից հետո մինչև 1945 թ. փետրվարի 2-ին գտնվում էր Լիտվայում, ապա տեղափոխվեց Ուկրաինա և գոյություն ունի առ այսօր: Հայկական մյուս՝ 89-րդ թմանյան եռակի շքանշանակիր հրաձգային դիվիզիան պատերազմի հաղթական ավարտից հետո, շնորհիվ Նրա հրամանատար գեներալ-մայոր Նվեր Սաժարյանի, 1-ին Բելոռուսական ռազմա-կառի քաղվարչության պետ, գեներալ-լեյտենանտ Սերգեյ Գալաշևի և Հայաստանի կոմկուսի կենտկոմի 1-ին քարտուղար Գրիգոր Հարությունյանի գործադրած ջանքերի 1945 թ. ամռանը փրկվեց անարդարացի կազմացրումից և փառքով վերադարձավ Հայաստան: Այն գոյություն ունեցավ մինչև 1956 թ. ամռան և հանդիսանում էր Անդրկովկասյան կարմիր դրոշի զինվորական օկրուգի առաջավոր գործառնություններից մեկը: Այդ փառապանք միավորումը կազմացրվեց Կարմիր բանակի մյուս ազգային գործառնությունների հետ միասին՝ 1945 թ. նոյեմբերի 1-ին քարտուղար Ն.Ս.Ներսիսյանի կողմից կամայականորեն ընդունած հակասահմանադրական որոշման հետևանքով:

10. Հայ պատմագրության պատվավոր խնդիրներից մեկը, դա մեր ժողովրդի մարտական ավանդույթների վերհանումն ու նրանց պրոպագանդումն է: Անտարակույս է այդ հզոր հոգևոր գործոնի նշանակությունը մեր երիտասարդության ուղղափառ դաստիարակության գործում: Հայկական ազգային գործառնությունների 1918-1945 թթ. հաղթանակ պատմությունն ու նրանց փառավոր մարտական գործերը կոչված են նպաստելու հայ պատմագրության այդ պատվավոր առաքելության կատարմանը:

Ուսումնասիրության արդյունքների հիման վրա ասենալուսության մեջ առաջ են քաշվում հետևյալ մի շարք գործնական հանձնարարականներ, որոնք, հեղինակի կարծիքով, կնպաստեն Հայկական բանակի և ազգային գործառնությունների պատմության հետագա ավելի նպաստակալաց հետազոտություններ:

1. Ներանում ստեղծել Հայաստանի առաջին հանրապետության բանակի, ինչպես նաև հայկական ազգային գործառնությունների մարտական փառքի թանգարան, այստեղ կենտրոնացնելով հանրապետությունում, մերձավոր արտասահմանի երկրներում և արևելքում պահպանված բազմաթիվ արժեքավոր մասունքներ:

2. ՀՀ պաշտպանության նախարարության համակարգում ստեղծել ռազմական պատմության կենտրոնական արխիվ, որտեղ համախմբել հայկական բանակի և ազ-

գալին գործադիրությունների վերաբերյալ անհրաժեշտ փաստաթղթերը, գինվորական թերթերի ու հանդեսների հավաքածուները:

3. Հայերեն և ռուսերեն ճեգուներով հրատարակել Հայկական առաջին հանրապետության բանակի, ինչպես նաև ազգային այն գործադիրությունների պատմությունն արտացոլող փաստաթղթերի ու նյութերի ժողովածուներ, որոնց վերաբերյալ առ այսօր չեն հրատարակվել նման աշխատություններ:

4. Երևանի և հանրապետության քաղաքների մի շարք փողոցներ անվանակոչել Հայկական բանակի և դիվիզիաների գորահրամանատարների ու հերոսների անուններով:

5. Հայաստանի Հանրապետության ռազմական ուսումնարանների ու դպրոցների սաներին ուսուցանել Հայկական բանակի և ազգային գործադիրությունների պատմությունը, հասարակագիտական բուհերի ուսանողների համար կարգալից հատուկ դասընթացներ, այդ նպատակով օգտագործելով սույն ուսումնասիրության նյութերը:

6. Երևանում բացել ՀՀ պաշտպանության նախարարության ռազմական պատմության ինստիտուտ, որի առաջնահերթ խնդիրներից մեկը համարել ոչ միայն Հայկական բանակի և ազգային գործադիրությունների, այլև հայկական գործի հնագույն շրջանից մինչև մեր օրերը եղած պատմության գիտական ուսումնասիրությունը:

7. ՀՀ պաշտպանության նախարարության, Հայ գինվոր, պաշտոնաթերթում պարբերաբար հոդվածաշար տպագրել նվիրված հայկական բանակի, հայկական ազգային գործադիրությունների, ընդհանրապես հայ գործական սպամության, հայ գորապետների և մարտերում առավել աչքի ընկած հերոսների մասին:

ԱՏԵՆԱՅՈՍՈՒԹՅԱՆ ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹՅՈՒՆԸ ՀՐԱՊԱՐԱԿՎԵԼ Է ՀԵՂԻՆԱԿԻ
ՀԵՏԵՎՅԱԼ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

ա/ ՄԵՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. 51-րդ գվարդիական դիվիզիայի մարտական ուղին, Ե., 1980, 8, 25 մամուլ:
2. Հայ ռազմիկները Չեխոսլովակիայի ազատագրման համար մղված մարտերում /1944-1945 թթ./, Ե., 1983, 15, 5 մամուլ:
3. Հայ ռազմիկները Հունգարիայի և Ավստրիայի ազատագրման մարտերում /1944-1945 թթ./, Ե., 1990, 33 մամուլ:
4. Հայկական ազգային գործադիրությունների 1918-1945 թվականներին, 14 մամուլ /մտել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի 1995 թ. հրատարակչական պլանի մեջ/:

բ/ ՀԱՄԱՀԵՂԻՆԱԿԱՅԻՆ ԱՇԽԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5. Գիրք հերոսների մասին, Ե., 1985, ծավալը 18 մամուլ, ռուսերեն /Վ. Ն. Ղազարյանի, Ա. Հ. Հարությունյանի, Կ. Բ. Ուղումյանի, Բ. Գ. Գրիգորյանի, Կ. Ս. Կոզմյանի, Մ. Գ. Սահակյանի, Հ. Ու. Մելիքսեթյանի, Ե. Մ. Խաչատրյանի, Լ. Վ. Մարտիրոսյանի և Խ. Ս. Պետրոսյանի համահեղինակությամբ/:
6. Նրանք մարտնչել են հանուն հայրենիքի, Ե., 1988, 25 մամուլ /Մ. Գ. Սահակյանի համահեղինակությամբ/:

գ/ ԱՐԽԻՎԱՅԻՆ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ԵՎ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱՆՈՒՆԵՐ

7. Հայկական 76-րդ Կ. Ե. Վորոշիլովի անվան կարմրադրոշ 51-րդ գվարդիական լիտբրակյան Լենինի շքանշանակիր հրաձգային դիվիզիա, Ե., 1976, 16, 75 մամուլ, , , Բանբեր Հայաստանի արխիվների, , , թիվ 3 /Ա. Հ. Հարությունյանի, Օ. Ս. Բալիկյանի և Է. Գ. Սարգսյանի համահեղինակությամբ/:
8. Հայկական 89-րդ Թամանյան կարմրադրոշ, Կուսուղովի 2-րդ աստիճանի, Կարմիր աստղի շքանշանակիր հրաձգային դիվիզիայի մարտական ուղին 1942-1945 թթ., Ե., 1985, 47 մամուլ, , , Բանբեր Հայաստանի արխիվների, , , թիվ 2 և 3 /Ա. Հ. Հարությունյանի, Օ. Ս. Բալիկյանի և Է. Գ. Սարգսյանի համահեղինակությամբ/:

դ/ ԳԻՏԱԿԱՆ ՀՈՐԱԿՆԵՐ

9. Հայկական 76-րդ Կ. Ե. Վորոշիլովի անվան կարմրադրոշ Լենինհրաձգային դիվիզիայի մարտական ուղին. Ձեկուցման թեզիսներ: , , Հայկ. ՍՍՀ ԳԱ պատմության ինստիտուտի երիտասարդ գիտաշխատողների և ասպիրանտների գիտական նստաշրջանի նյութեր, , , Ե., 1970, 0, 1 մամուլ:
10. ԵՆԵՐ Հայկական 76-րդ Կ. Ե. Վորոշիլովի անվան կարմրադրոշ Լենինհրաձգային դիվիզիայի պատմությունից, , , Բանբեր Հայաստանի արխիվների, , , 1971, թիվ 3, 0, 9 մամուլ:
11. Հայկական 76-րդ դիվիզիան Հայրենական մեծ պատերազմում /հունիս 1941-փետրվար 1943/, , , Լրաբեր հասարակական գիտությունների, , , 1971, թիվ 6, 0, 7 մամուլ:
12. Հայկական դիվիզիան 1922-1940 թվականներին, , , Լրաբեր հասարակական գիտությունների, , , 1972, թիվ 2, 0, 6 մամուլ:
13. Փաստաթղթեր ռազմաճակատի հետ Հայաստանի աշխատավորության անխզելի կապերի մասին /1941-1945 թթ./, , , Լրաբեր Հայաստանի արխիվների, , , 1973, թիվ 2, 1, 3 մամուլ, ռուսերեն:
14. Տանկային բրիգադի հրամանատարը, , , Բանբեր Հայաստանի արխիվների, , , 1974, թիվ 3, 0, 8 մամուլ, ռուսերեն:
15. Հայ ռազմիկները Բրատսլավայի համար մղված մարտերում /25 մարտի -

- 4 աղբիլի 1945 թ./, ,Լրաբեր հասարակական գիտությունների,, 1974, թիվ 2, 0,7 մամուլ:
16. Ձեխոսկովիաի ազատագրման համար մղված մարտերում, ,Բանբեր Հայաստանի արևիվների,, 1975, թիվ 1, 1,8 մամուլ, ոուսերեն:
 17. Սովետական շքանշանի ասպետը, ,Սովետական Հայաստան,, ամսագիր, 1976, թիվ 2, 0,3 մամուլ:
 18. Սովետահայ զինվորական մամուլը 1920-1930-ական թվականներին, ,Լրաբեր հասարակական գիտությունների,, 1976, թիվ 8, 0,7 մամուլ:
 19. Գրոհային հարվածի վարպետը, ,Բանբեր Հայաստանի արևիվների,, 1977, թիվ 2, 0,5 մամուլ, ոուսերեն:
 20. 51-րդ զվարդիական հրաձգային դիվիզիան Կուրսկի ճակատամարտում, ,Բանբեր Հայաստանի արևիվների,, 1978, թիվ 2, 0,6 մամուլ:
 21. Քաղաքատուր եղբայրների ռազմաճակատային գործունեությունը, ,Բանբեր Հայաստանի արևիվների,, 1978, թիվ 3, 0,8 մամուլ:
 22. Կարմիր բանակի հայկական առաջին դիվիզիան, ,Գարուն,, 1982, թիվ 2:
 23. Հեծյալ զնդի հրամանատարը, ,Բանբեր Հայաստանի արևիվների,, 1982, թիվ 3, 0,5 մամուլ, ոուսերեն:
 24. Կարմիր բանակի ազգային ռազմական շինարարության պատմությունից /1918-1920 թթ./, ,Բանբեր Հայաստանի արևիվների,, 1983, թիվ 3, 0,6 մամուլ:
 25. Մարտական չորս շքանշանների ասպետը, ,Բանբեր Հայաստանի արևիվների,, 1985, թիվ 1, 0,7 մամուլ, ոուսերեն /Մ.Գ.Սահակյանի համահեղինակությամբ/:
 26. Հունգարիայի և Ավստրիայի ազատագրման մարտերում /1944-1945 թթ./, ,Բանբեր Հայաստանի արևիվների,, 1985, թիվ 1, 2,8 մամուլ, ոուսերեն:
 27. Հայկական դիվիզիաները Հայրենական մեծ պատերազմի տարիներին, ,Լրաբեր հասարակական գիտությունների,, 1985, թիվ 5, 0,8 մամուլ:
 28. Անդրկովկասում ազգային զորամիավորումների կազմավորման պատմությունից /1920-1923 թթ./, ,Բանբեր Հայաստանի արևիվների,, 1987, թիվ 2, 1,4 մամուլ, ոուսերեն:
 29. Վաստակաշատ զինականը և քաղաքային ,Լրաբեր հասարակական գիտությունների,, 1988, թիվ 4, 0,3 մամուլ, /Խ.Հ.Բարսեղյանի համահեղինակությամբ/:
 30. Պարզևսարման թերթիկներ հայ զորողների ռազմաճակատային գործունեությունից /1941-1945 թթ./, ,Բանբեր Հայաստանի արևիվների,, 1989, թիվ 1, 0,8 մամուլ, ոուսերեն:
 31. Նոր փաստաթղթեր հայ թմանցիների մարտական սխրանքների վերաբերյալ,

- ,,Բանբեր Հայաստանի արևիվների,, 1990, թիվ 1, 1 մամուլ, ոուսերեն:
32. Հայաստանի Հանրապետության բանակը 1918-1920 թվականներին, ,Լրաբեր հասարակական գիտությունների,, 1994, թիվ 4, 1 մամուլ:
- ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆ.- Բացի վերոհիշյալից Հայաստանի Հանրապետության կենտրոնական և շրջանային թերթերի, Հայկական Սովետական Հանրագիտարանի էջերում, տարբեր տեսանկյուններով, հրատարակվել են հեղինակի ավելի քան 30 հոդվածներ՝ նվիրված հայկական քանակի, հայկական ազգային զորամիավորումների և զորամասերի պատմությանը, Հայրենական մեծ պատերազմում հայ ժողովրդի զավակների կատարած սխրանքներին:

Կ.Ա. Արությունյան

Армянские Национальные Воинские
Формирования (1918-1945гг.)

Р е з ю м е

История армянских национальных воинских формирований 1918-1945гг. - важная составная часть истории армянского народа, обязательный аспект истории национально-государственного строительства - один из актуальных и важных проблем современной армянской историографии. Тема эта охватывает такие взаимосвязанные вопросы, как "Армянская армия в 1918-1920гг.", "Армия Советской Армении в 1920-1922гг.", "Армянская стрелковая дивизия в годы мирного строительства 1922-1940гг.", "Армянские национальные воинские формирования в годы Великой Отечественной войны 1941-1945гг.". Все эти четыре главы диссертации показывают, что исследование непосредственно связано со следующими важными вопросами - восстановлению государственности в Армении и формирование ее армии; решающая роль армии в защите Армянской республики; переформирование этой армии в Армянскую Красную армию; использование бывших офицерских кадров в новой армии, их ссылка в Баку и Рязань и их дальнейшая судьба; гражданская война в Армении; переформирование Армянской Красной армии в отдельную бригаду, а с 5 сентября 1922г. - в Армянскую стрелковую дивизию; подготовка новых командирских кадров, обучение и воспитание личного состава дивизии, ее участие в культурном и экономическом строительстве республики; достигнутые успехи в области боевой подготовки в горных условиях, за что дивизия была награждена орденом Красного Знамени и получила номер 76 и имя Наркома Обороны СССР, маршала К.Е. Ворожилова; переформирование нацио-

нальных формирований Красной Армии в общесоюзную; сталинские репрессии против 40 тысяч военнопленных в 1937-1939 гг.; Великая Отечественная война и создание в ноябре 1941 г. новых национальных воинских соединений, в том числе армянских 89, 201, 390, 408 и 409 стрелковых дивизий, боевой путь этих дивизий и их дальнейшая судьба. Все эти вопросы изучены преимущественно на основе неопубликованных документов и материалов, выявленных автором в соответствующих фондах центральных государственных архивов Армении (ЦГА, ЦГАН, ЦГАДПО - бывший партархив) и Российской Федерации (ЦАМО РФ, ЦГАСА, ЦГАСА, ЦГА ДПО РФ - бывший ЦНА ИМЛ). Значительная часть этих документов и материалов впервые вводится в научный оборот.

Одной из почетных задач армянской историографии является выявление и пропаганда боевых традиций нашего народа. Неоспоримо значение этого могучего идейного фактора в деле военно-патриотического воспитания молодежи, особенно сейчас, в их подготовке к службе в рядах Вооруженных Сил Республики Армения.

Данная диссертационная работа призвана также способствовать осуществлению этой почетной миссии отечественной историографии.

Թիվ 4

Տպարան

100

Տպարան է ՀՀ ԳԱՀասարակական գիտությունների
գիտական ինֆորմացիայի կենտրոնի ուղղորդմամբ
տեղամասում, Երևան- 1, Արվյան 15